

ՓԱՌԱՊԱՆՄ ՔԱՌԱՍՈՒՆԱՄՅԱԿ

Գ. Ս. ՋՈՑՆԻՁԵ

Վրացական ՍՍՌ Վերագույն Սովետի նախագահության նախագահ

1921 թվականի փետրվարի 25-ը:

Այդ օրը պատմական հաղթանակով ավարտվեց Վրաստանի աշխատավորների ազատության և անկախության համար մղած հերոսական պայքարը:

Այդ նշանակալից օրից սկսվեց վրաց ժողովրդի կյանքի նոր դարագլուխը: Վրաստանի աշխատավորները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, Սովետական Միության ամբողջ բազմազգ ժողովրդի հետ միասին, ձեռնամուխ եղան սոցիալիզմի հռչակապ շենքի կառուցմանը: Եվ ահա այսօր նրանք քառասուններորդ անգամ նշում են Վրաստանի բազմադարյան պատմության ամենանշանակալից տարեթիվը:

Ցուրաբանչյուր տարի մեր երկրին բերում է նոր հաջողություններ, նոր հաղթանակներ: Այս տարի՝ յոթնամյակի երրորդ տարին, նույնպես նշանավորվեց ակնառու նվաճումներով, պատմական վիթխարի կարևորություն ունեցող իրադարձություններով:

Վրաց ժողովուրդը իր հոբելյանական տարին նշում է տնտեսական և կուլտուրական շինարարության բոլոր բնագավառներում ձեռք բերած խոշոր հաջողություններով: Վրաց, ադրբեջանական և հայ ժողովուրդների կյանքում մեծ, բերկրալից իրադարձություն էր Անդրկովկասի սոցիալիստական հանրապետության առաջավորների Քրիլիսիում կայացած կորհրդակցությունը, որի աշխատանքին մասնակցեց ՍՄԿՊ Կենտկոմի առաջին քարտուղար, ՍՍՌՄ Մինիստրների Սովետի նախագահ ընկեր Ն. Ս. Խրուշչովը: Կորհրդակցության մասնակիցները քննարկեցին Անդրկովկասի սոցիալիստական հանրապետության աշխատողների խնդիրները, որոնք բխում են ՍՄԿՊ Կենտկոմի Հունվարյան պլենումի որոշումներից: Ն. Ս. Խրուշչովի քննադատական յուրջ գիտողությունները և արժեքավոր խորհուրդները օգնեցին բացահայտելու գյուղատնտեսական արտադրության զգալի աճերվներ, նշելու Կենտկոմի պլենումի սահմանած նոր բնագծերին հասնելու ուղիները: Վրաստանի աշխատավորները ոգևորությամբ ձեռնամուխ են եղել Ն. Ս. Խրուշչովի ցուցումների, իրենց ստանձնած բարձր պարտավորությունների կատարմանը:

Այս տարի սովետական ժողովրդի համար կլինի նոր, հիանալի հաղթանակների տարի: Վրաստանի աշխատավորները պատրաստում են աշխատանքային պանծալի նվերներ ՍՄԿՊ XXII համադումարին, իրենց արժանավայել ավանդն են մտցնում մեր երկրում կոմունիզմի հաղթանակի գործում:

* * *

Սովետական իշխանության տարիներին Վրաստանում խոր սեպտուցիոն վերափոխումներ տեղի ունեցան: Դեռ քսան տարի առաջ Վրաստանը գործավ համատարած գրագիտության ռեսպուբլիկա: Վրաց ժողովրդի կուլտուրայի ծաղկման, բարեկեցության վառ ցուցանիշն է այն փաստը, որ մեր սեպտուբրիկայի յուրաքանչյուր 5-րդ բնակիչը սովորում է զպրոցում, տեխնիկումում կամ բարձրագույն ուսումնական հաստատությունում:

Ռեսպուբլիկայում բանվորների և ծառայողների ընդհանուր թիվը 863 հազար մարդուց անցնում է, մինչդեռ 1929 թվականին բանվորների և ծառայողների թիվը չէր անցնում 191 հազարից, իսկ 1940 թվականին՝ 454 հազարից: Այժմ Վրաստանի յուրաքանչյուր հազար բնակչին ընկնում է բարձրագույն կրթությունը 38 մարդ և միջնակարգ կրթությունը 315 մարդ: Սովետական իշխանության տարիներին ռեսպուբլիկայի բարձրագույն ուսումնական հաստատությունները պատրաստել են 131 հազար, իսկ տեխնիկումները՝ մոտ 190 հազար մասնագետ:

Ահա թե ժողովրդին ի՞նչ տվեց Սովետական իշխանությունը: Կյանքն ընթացավ շտեմնված առաջադիմության ուղիով: 40 տարվա ընթացքում Կոմունիստական պարտիայի աճեցրած մարդը անձանաչելիորեն փոխեց մեր սեպտուբրիկայի դեմքը, զարգացրեց նրա էկոնոմիկան, գիտությունը, կուլտուրան: Վրաստանը գործավ Սովետական Միության առաջավոր սեպտուբրիկաներից մեկը՝ տեխնիկայի վերջին խոսքի համաձայն հասցեցված արդյունարերությունը, բարձր զարգացած գյուղատնտեսությունը, ձևով ազգային և բովանդակով սոցիալիստական կուլտուրայով:

Այն երկրում, որտեղ մինչև Սովետական իշխանության հաստատումը միայն անաչնագործական եղանակով արտադրում էին զանազան մանր իրեր, այսօր պատրաստվում են պողպատ ու չուգուն, հզոր մագիստրալային էլեկտրաբարձիր ու բեռնատար ավտոմեքենաներ, ամենաճշգրիտ սարքեր, էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ, մետաղահատ ունիկալ հաստոցներ, էլեկտրասարքավորումներ, բարդ մեխանիզմներ, ցեմենտ, ֆերրոձուլվածքներ, լիտոպոն, հանքային պարարտանյութեր, բամբակե, բրդե և մետաքսե գործվածքներ, թեյ, պահածո, շամպայն, հրուշակեղեն և ծանր, թեթև ու սննդի արդյունաբերության այլ արտադրանքներ: Գրանք սպառվում են ոչ միայն Վրաստանում, այլև ամբողջ Սովետական Միությունում, ուղարկվում են արտասահման, վաչելում են սպառողների մեծ պահանջարկը:

Սովետական հասարակարգը պայմաններ ապահովեց արդյունաբերության միանգամայն նոր էյուղերի զարգացման համար: Կառուցված են հազարավոր արդյունաբերական ձեռնարկություններ: Վերակառուցվում են հները: Այս ամենի շնորհիվ համախառն արտադրանքի ծավալը մինչև 1961 թվականի հունվարի 1-ը, 1930 թվականի համեմատությամբ, աճեց 41 և ավելի անգամ, այդ թվում ծանր արդյունաբերության ծավալը՝ ավելի քան 115 անգամ:

Վրաստանում Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ տարիներից մեծ ուշադրություն նվիրվեց ժողովրդական տնտեսության հիմքի զարգացմանը՝ հզոր էներգետիկ բազայի ստեղծմանը: Մինչև 1921 թվականը ռեսպուբլիկայում գործող էլեկտրակայանների ընդհանուր կարողությունը 8 հազար կիլովատից չէր անցնում, 1913 թվականին արտադրվել էր ընդամենը 20 մի-

լիոն կիրովատ-ժամ էլեկտրաէներգիա: Այժմ՝ ռեսպուբլիկայում գործում են պետական խոշոր հիդրոէլեկտրակայաններ, ինչպես նաև շրջանային, միջկուտնտեսային հիդրոէլեկտրակայաններ և ջերմաէլեկտրակայաններ, որոնց կարողությունը 831 հազար կիրովատից անցնում է: Միայն անցյալ տարի Վրաստանի էլեկտրակայանները արտադրեցին 3.800 միլիոն կիրովատ-ժամ էլեկտրաէներգիա, 191 անգամ ավելի, քան 1913 թվականին:

Մեր պարծանքը Ռուսթավի նոր սոցիալիստական քաղաքն է իր Ի. Վ. Ստալինի անվան մետալուրգիական գործարանով և այլ արդյունաբերական ձեռնարկություններով:

Իսկ մի՞թե միայն Ռուսթավի մետալուրգիական գործարանն է հռչակվել իր արտադրանքով: Մեր երկրում և նրա սահմաններից դուրս շատ սպառողներ ունեն Թբիլիսիի Ս. Մ. Կիրովի անվան հաստոցաշինական գործարանի մետաղահատ ունիվերսալ հաստոցները, որոնց թողարկումը տարեցատարի աճում է:

Ճիաթուրայի մարգանեցի բազայի վրա, պատերազմից դեռ շատ առաջ, կառուցվեց Զեսուտափոնիի Ֆերրոձուլվածքների գործարանը: Ճիաթուրայի մարգանեցը և այդ գործարանի արտադրանքը ուղարկվում է Սովետական Միության և աշխարհի շատ քաղաքներ:

Սովետական իշխանության տարիներին լայնորեն զարգացավ ածխարդյունաբերությունը: Հայտաբերվեցին նոր ածխահանքեր, կառուցվեցին Տըզվարչելիի և այլ ածխահորերը, հարստացուցիչ ֆաբրիկաներ: Այժմ ռեսպուբլիկայում արդյունահանվում է մի քանի միլիոն տոննա ածուխ 1913 թվականին արդյունահանված 70 հազար տոննայի փոխարեն:

Նապատերազմյան տարիներին շարք մտավ Քուֆախիի Ալստոմբրիի գործարանը, իսկ 1958 թվականին՝ Թբիլիսիի էլեկտրաքարշի գործարանը, որի շնորհիվ մեր ռեսպուբլիկան զարձակ փոխադրական միջոցներ արտադրող:

Սովետական իշխանության տարիներին վիթխարի զարգացում ստացավ նաև թեթև, տեքստիլ և սննդի արդյունաբերությունը:

Համաշխարհային հռչակ են նվաճել վրացական թեյը, գինին, շամպայնը, կոնյակը, պահածոն և սննդի արդյունաբերության մյուս արտադրանքները:

Մեծ զարգացման է հասել նաև գյուղատնտեսությունը: Գեո 1923 թվականին վրաց գյուղացիները հողը մշակում էին պրիմիտիվ եղանակով:

Այժմ պատկերը լիովին փոխվել է: Ընդարձակ տարածություններում փովել են թեյի և մերձարևադարձային պտուղների պլանտացիաները, խաղողի և պտղատու այգիները, տեխնիկական և հացահատիկային կուլտուրաները, որոնց մշակման համար ավելի ու ավելի լայնորեն է կիրառվում տեխնիկան: Այժմ 1.115 կուլտնտեսություններ, կամ բոլոր կուլտնտեսությունների 54 տոկոսը, և բոլոր 131 սովխոզները լիովին էլեկտրիֆիկացված են: Կուլտնտեսություններում, նորոգման տեխնիկական կայաններում, սովխոզներում՝ աշխատում են ավելի քան 11.200 մասնագետներ, այդ թվում 3 հազար գյուղատնտես, անասնաբույժ և գոտոեխնիկ, 500 ինժեներ և այլ մասնագետներ:

Մեզ մոտ լայնորեն զարգանում է մերձարևադարձային գյուղատնտեսությունը: Ավելյանում են ցիտրուսային և պտղատու այգիների տարածությունները:

Գյուղատնտեսության ուժեղ զարգացումը ղգալիորեն բարձրացրեց կուլտնտեսությունների եկամուտները: Օրինակ, եթե 1955 թվականին ռեսպուբլիկայի կուլտնտեսությունների եկամուտը կազմում էր 198.750 հազար ռուբլի (1961 թվականի գներով), ապա 1959 թվականին այն 243.500 հազար ռուբլուց

անցավ: Այդ բանը կուտնտեսություններին հնարավորություն տվեց լայնորեն ծավալել կուլտուր-կենցաղային շինարարությունը:

Սովետական իշխանության տարիներին փարթավոր են ծաղկեց վրացական ազգային կուլտուրան, որն ունի մեծ պատմություն և պանծալի տրադիցիա: Գեոպոլիտիկան պատվեց գիտական, ուսումնական, կուլտուր-լուսավորական հիմնարկների խիտ ցանցով: Այժմ մենք ունենք 4.644 դպրոց՝ մեկ դպրոց յուրաքանչյուր 870 բնակչին: Դպրոցներում սովորում է 700 հազարից ավելի աշակերտ: Բնագոբլիկայում աշխատում են մոտ 60 հազար ուսուցիչ: Բացված են նաև 81 տեխնիկում և այլ մասնագիտական միջնակարգ ուսումնական հաստատություն, 18 բարձրագույն ուսումնական հաստատություն, որոնցում համապատասխանաբար գլխավորներ են ստանում 26.300 և 56.300 ուսանողներ:

Վրաստանում ստեղծված են Գիտությունների ակադեմիա և Գյուլյատնտեսական գիտությունների ակադեմիա, մոտ 160 խոշոր գիտական հիմնարկ: Բնագոբլիկայում գործում են մոտ 8 հազար գիտական աշխատողներ, որոնցից 414-ը գիտությունների դոկտոր են և 3.081-ը գիտությունների թեկնածու:

Վրաց և ամբողջ սովետական կուլտուրայի զարգացման գործում զգալի ավանդ են մտցրել մեր արձակագիրները, բանաստեղծները, կոմպոզիտորները, նկարիչները, արվեստի մյուս բնագավառների աշխատողները:

Սովետական Վրաստանում, ինչպես նաև մեր ամբողջ երկրում, ամենօրյա ուշադրություն է նվիրվում բնակչության առողջության պահպանմանը: Այժմ մեզ մոտ կան 660-ից ավելի հիվանդանոց, ավելի քան 1.370 բուժկայան, բուժարան, պոլիկլինիկա, բուժակա-բուժարանային օգնության 960-ից ավելի կետ, մոտ 130 սանատորիա և հանգստյան տուն ու շատ այլ բուժօգնարկներ: Նրանցում աշխատում են 13 հազարից ավելի բժիշկ, մոտ 30 հազար միջին սրահավորման բուժաշխատող:

Ժողովրդական տնտեսության և կուլտուրայի զարգացումը առաջ բերեց աշխատավորների նյութական բարեկեցության շտեմնված վերելք:

Վիթխարի են, հոյակապ այս նվաճումները, բայց է՛լ ավելի փառահեղ է մեր ապագան: Բնագոբլիկայի աշխատավորները ամբողջ սովետական ժողովրդի հետ միասին, հաջողությամբ կենսագործում են պարտիայի մշակած յոթնամյա պլանը, որի մեջ մեծ տեղ է հատկացված Վրաստանի էկոնոմիկայի հետագա զարգացմանը: 1965 թվականին արդյունաբերական ապրանքների արտադրությունը, 1958 թվականի համեմատությամբ, կավելանա 75 տոկոսով: Կկառուցվեն նոր, հզոր հիդրոէլեկտրակայաններ և ջերմաէլեկտրակայաններ, քիմիական, սննդի և թեթև արդյունաբերության ձեռնարկություններ, կահի գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, է՛լ ավելի կբարձրանա ժողովրդի նյութական բարեկեցության մակարդակը: Այսօր, իր ազգային տոնի օրը, վրաց ժողովուրդը խոր շնորհակալության և երախտագիտության զգացմունքով իր հայացքն ուղղում է փորձված առաջնորդ, մեր բոլոր հաղթանակների ոգեշնչող և կազմակերպիչ, փառապանծ Կոմունիստական պարտիային, նրա լենինյան Կենտրոնական Կոմիտեին, Սովետական Կառավարությանը և խոստանում է, որ այսուհետև էլ ամբողջ սովետական ժողովրդի հետ միասին անդու կերպով կպայքարի կոմունիզմի վերջնական հաղթանակի համար: